

4138

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱԳԷՄ

Ծ Ր Ա Գ Ր Ե Ա Ն

Ի ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՅԱԿՈՎԲԵԱՆ

ԸՆԿԱԼԵԱԼ ԵՒ ՎԱԻԵՐԱՑԵԱԼ

Ի ՄԻԱՌԱՆՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Ի Ս. ԵՐՈՒՍԱԳԷՄ

1881

281.6

U-97

281.6
U-97

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ



ԾՐԱԳՐԵԱԼ

Ի ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՅԱԿՈՎԲԵԱՆ

— 2001

ԸՆԿԱԼԵԱԼ ԵՒ ՎԱՌԵՐԱՑԵԱԼ

Ի ՄԻԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Ի Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄ

1881

2012

2010

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՄԻՍՔԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ՍՐՔՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ԳԼՈՒԽ Ա.

ԲԱՑՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԵՒ


ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԴԻԻԱՆԻ

Յօդուած 1. — ՄԻՍՔԱՆՈՒԹԵԱՆՍ տարեկան շրջանը Մայիս 1էն կը սկսի եւ Ապրիլի վերջը կ'աւարտի:

Ս. Աթոռոյս Պատրիարք Ամենապատիւ Սրբազանը՝ իբրեւ Նախագահ՝ Միաբանական Կոնգրանուր Ժողովոյ շրջանը կը բանայ Մայիսի անձին շաբթուն մէջ մասնաւոր ճառով մը, զոր Տեառն Սուրհմբղոյ խորհրդակցութեամբ կը պատրաստէ:

Բացման ճառով Կոնգրանուր Կոնգրանուր մը կ'ընէ Միաբանական գործոց նախընթաց տարւոյն վիճակին վրայ եւ Ընդհ. Ժողովոյ ուղադրութեանը կը յաճնա-

53668-ախ



39972-64

ըրբէ ատենական նոր շրջանին մէջ լուծելի գլխաւոր խնդիրները:

Ատենական շրջանի վերջերը՝ ըստ կանոնի՝ Տն. Խորհրդոյ համարատուութեան Տեղեկագիրը և նոյն տարւոյ հաշիւները կը քննուին և յաջորդ տարւոյ Սեփարացի կը հաստատուի և կը վաւերանայ և սոյն գործողութեամբք Ընդհ. Ժողովը կը փակուի և Դիւանի պաշտօնը կ'աւարտի, եթէ իւր պաշտօնավարութեան երկու տարին լրացած ըլլայ:

Յօդ. 2. — Բացման ճառէն անմիջապէս յետոյ, եթէ Դիւանի վերանորոգումը նոյն տարին հանդիպի, Նախագահ Սրբազանը կը հրաւիրէ ժողովականներէն երիցագոյն մէկը առժամանակեայ Ատենապետ բազմիւ և կրտսերագոյն մը՝ Ատենադպրութեան պաշտօն վարել:

Այս առժամանակեայ Դիւանին գործն է Միաբանական Ընդհ. Ժողովոյ Դիւանին կազմութիւնը:

Յօդ. 3. — Ընդհ. Ժողովոյ Դիւանը մէկ Ատենապետէ, մէկ Փոխ-Ատենապետէ(*), մէկ Ատենադպրէ եւ մէկ Փոխ-Ատենադպրէ կը բաղկանայ, որք երկու շրջանի համար կ'ընտրուին եւ անմիջապէս վերընտրելի են:

Յօդ. 4. — Ատենապետ և Ատենադպիր առանձինն կ'ընտրուին միանուն քուէով և բացարձակ առաւելութեամբ քուէից: Իսկ երկուքին ալ փոխանորդները՝ թէև դարձեալ առանձինն և միանուն քուէով, բայց համեմատական առաւելութեամբ կրնան ընդունուիլ:

Քուէից հաւասարութիւն պատահած ատեն վիճակ կը ձգուի:

(*) Փոխ-Ատենապետը Դիւանը չը բազմիր, այլ միայն Ատենապետի բացակայութեան ատեն նորա կը փոխանորդէ:

Եթէ Դիւանին մէջ հրաժարում պատահի, նոր ընտրութիւն կ'ըլլայ՝ փոխանորդ իսկական ըլլալով և տեղը նոր փոխանորդ մը ընտրուելով:

Յօդ. 5. — Ատենադրութեանց տոմարէն զատ Դիւանն ունի երկու տոմար՝ խնդրոց կարգի տոմար և ներկայութեան տոմար, զորս Ատենադպիրը կը պատրաստէ աջակցութեամբ Փոխ-Ատենադպրին:

Գ Լ ՈՒ Բ.

Ա Տ Ն Ն Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ք

Յօդ. 6. — Միաբանական Ընդհ. Ժողովը կը գումարուի ի Պատրիարքարան,

Ա. Կանոնադրապէս ամէն ամսագլուխ՝ առաջին երկուշաբթի օրը ժամը 12ին՝ ցորչափ որ խնդիր կայ իւր օրակարգին մէջ:

Բ. Պարահապէս, երբ Պատրիարքը, կամ Տնօրէն Խորհուրդը մասնաւոր խնդրոյ մը համար հարկ տեսնեն եւ կամ Ընդհ. Ժողովոյ Ս. Երուսաղէմի մէջ գտնուող անդամոց մէկ երրորդ մասն՝ բացորոշ խնդրոյ մը համար ստորագրեալ խնդրագրով հայցեն անոր գումարումը:

Պատրիարքը, կամ Ս. Աթոռոյ պարապ ժամանակ՝ Տեղակալը, եւ Պատրիարքի ամբաստանութեան ժամանակ՝ Պատրիարքական Փոխանորդը կը հրաւիրէ զանդամս ի ժողով, ամէն անգամ օրակարգի խնդիրը գէթ 12 ժամ առաջ գրով ծանուցանելով ամէն մէկուն:

Երբ օրակարգն սպառի, նիստերը կը դադրին. բայց ժողովը բաց կը համարուի, ըստ առաջին յօդուածի կանոնադրութեան:

Յօդ. 7. — Անձնիւր ժողովական՝ ժողովարանէն ներս մտած ատեն՝ ներկայութեան տոմարին մէջ իւր ստորագրութիւնը պէտք է դնէ իւր անուան առջև:

Ատենը կը բացուի ճիշդ որոշեալ ժամուն Տէրունական աղօթքով և նախընթաց ատենագրութիւնն ընդունելութեան կը գրուի ի ներկայութեան որ և է թուոյ անգամոց: Ներկայ անգամք զիտողութիւննին կ'ընեն միայն Խմբագրութեան նկատմամբ. ետքէն եկողները, կամ հետեւեալ նիստերուն մէջ ներկայ եղողներն իրաւունք չունին ո՛չ ինչ սրբագրել տալու և ո՛չ բողոքելու:

Յօդ. 8. — Ատենապետը կը բանայ եւ կը փակէ ատենը:

Ատենապետին պաշտօնն է վիճաբանութիւններն ուղղել, ատենաբանից կարգով խօսք տալ, կանոնագրութեան պահպանութեանը հսկել, ժողովն ըստ կանոնի ղեկավարել և բարեկարգութիւնը պահել:

Ատենապետին բացակայութեան ատեն՝ Փոխ-Ատենապետին կը մնայ այս պաշտօնը(*):

Յօդ. 9. — Ատենագրին պաշտօնն է կոչնագիրները պատրաստել եւ նախագահին ստորագրութեամբ ժամանակին ժողովականաց ղրկել, նստի մը ատե-

նագրութիւնն ամփոփ և ըստ կարի ճիշդ խմբագրել, օրինակելով միանգամայն նոյն նստին մէջ ներկայացուած գրութիւնները և խնդրոց կարգին ու ներկայութեան տոմարներու կանոնաւորութեանը հսկել. իսկ Փոխ-Ատենագրին պաշտօնն է Ատենագրին աշխատութեանց աջակցիլ և նորա բացակայութեանը ատեն՝ նոյն պաշտօնը վարել:

Յօդ. 10. — Ատենագրութեան ընթերցումը յատենի կ'ըլլայ և Ատենապետ ու Ատենագրի՝ յետ ընդունելութեան կը ստորագրեն:

Ատենագրութիւնն ուրիշ բան չէ, բայց եթէ նստի մը մէջ անցածին ըստ կարի ճիշդ եւ հաւատարիմ պատկերը: Դիտողութիւնք անոր անճիշդ երեւցած կէտերուն վրայ միայն կրնան ըլլալ, որք յաջորդ նստին մէջ ընթեռնի ատենագրութեան սկիզբն անպատճառ կը նշանակուին: Դիտողութեան պատրուակով անցեալէն թել մը բռնել և նոր խնդիր հանելը՝ խնդիրէն շեղիլ է և աններելի:

Դիտողութեանց կը պատասխանէ խմբագիր Ատենագրիւրը, եթէ հարկ կայ պատասխանելու, բայց թէ՛ զիտող և թէ՛ պատասխանող մէկ անգամ կրնան խօսիլ:

Ատենագրութեան ընդունելութիւնը ձեռամբարձով կ'ըլլայ առանց վիճաբանութեան:

Յօդ. 11. — Օրակարգին անցնելէն առաջ Ատենապետը ժողովին կը հաղորդէ անոր վերաբերեալ թուղթերը և ժողովը՝ Ատենապետին առաջարկութեան վրայ յղումները կ'արտասանէ ձեռամբարձով առանց վիճաբանութեան:

Ժողովին մատուցեալ որեւէ թուղթ Ս. Նախագահին կ'ուղղուի, որ ժամ առաջ Ընդհ. Ժողովոյ Դիւանին կ'աւանդէ. միայն ընդդէմ Պատրիարքին ամբաստանագիրն ուղղակի Ատենապետին կ'ուղղուի:

(*) Եթէ Ատենապետը սոյն կանոնադրութեան որեւէ իցէ յօդուածոյն հակառակ վարուի, որեւէ ժողովական իրաւունք ունի բողոքելու յառաջ բերելով նոյն յօդուածը:

Այս պարագայիս մէջ եթէ խնդիրը ծանր կերպարանք առնու, Ատենապետը Փոխ-Ատենապետին կը թողու Աթոռը և ժողովականաց կարգը կ'անցնի՝ ղինքն արդարացնելու համար:

Ժողովին արտասանած յղումներն առ Վարչութիւն Ս. Աթոռոյ կամ առ Մասնաժողովս, նոյնպէս ալ Ընդհ. Ժողովէն առ Ազգ. Երեսփոխանական Ժողովը մատուցեալ որեւէ թուղթ՝ կը ստորագրէ Ս. Նախագահին հետ նաեւ Ատենապետն Ընդհ. Ժողովոյ:

Բայց երբ յղումն առ Նախագահն է, միայն Ընդհ. Ժողովոյ Դիւանը կը ստորագրէ (Տ. Յօդ. 98 եւ 99 Կանոնի Միաբանական Ուխտին):

Յօդ. 12. — Ո՛չ մէկ ժողովական առանց Ատենապետէն խօսք խնդրելու և առնելու՝ իրաւունք չունի խօսիլ:

Նախագահ Սրբազանը՝ երբ խնդրէ՝ խօսքն իրն է: Ատենաբանը պարտի խնդիրէն չը շեղիլ:

Ատենապետը, երբ իբր անգամ խօսիլ ուզէ, Փոխ Ատենապետին կը թողու կանխաւ Աթոռը, ինքն ալ իւր կարգին խօսք կը խնդրէ և նոյն խնդրոյն համար այլ եւս Ատենապետ չը բաղմիր:

Յօդ. 13. — Միեւնոյն խնդրոյն վրայ երեք անգամէն աւելի չը խօսուիր և խնդրողին Ատենապետը չի կրնար ներել առանց Ժողովին հաճութեան. ի բաց առեալ են առաջարկութեան մը հեղինակն ու տեղեկաբերը:

Յօդ. 14. — Անձնական գէպքի մը, կամ կանոնադրական դիտողութեան մը համար խօսք ուղղողին՝ խօսք չի զլացուիր(*):

(*) Զորօրինակ խօսքի առաջնութեան համար, քուէի սըխալ մը ուղղելու համար, անընդունելի բառի մը կամ թիւը մեկնուած իմաստի մը սրբազրութեան համար, և այլն:

Սոյն պարագայս մէջ՝ եթէ պատասխանելու տեղի կայ, ուստի որ անկ է՝ նա միայն կը պատասխանէ. բայց թէ՛ բողոքող և թէ՛ պատասխանող մէկ անգամ կրնան խօսիլ:

Յօդ. 15. — Արդիւեալ են ամենայն ընդմիջում, աղմկայոյզ ցոյցեր և բեմական լեզուի անվայել բառեր և բացազանչութիւններ:

Յօդ. 16. — Եթէ նիստը աղմկալից ըլլայ եւ Ատենապետը, կամ Նախագահը չի կրնան զայն հանդարտեցնել, Ատենապետը կ'ազդարարէ, որ նիստը վերցնելու պիտի պարտաւորի:

Երկրորդ ապարդիւն ազդէն ետքը՝ նիստը կը վերնայ՝ յաջորդ օրը գումարելու պայմանաւ:

Յօդ. 17. — Ատենան փակ յայտարարելէն առաջ Ատենապետը կը կարգադրէ՝ Ժողովին խորհուրդն առնելով, յաջորդ նստին օրն ու օրակարգը, որ ատենադրութեան մէջ կը նշանակուի:

Գ Լ ՈՒՒ Գ.

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՐՈՇՈՒՄ

Յօդ. 18. — Նախավճիռ միշտ կրնայ առաջարկուիլ(*):

Յօդ. 19. — Վիճաբանութիւնն աւարտեալ է, երբ խօսից կարգն սպառի և ատենաբանը Կանոնադրու-

(*) Նախավճիռ կամ Գախալարգ վճիռ կը կոչուի՝ խնդրոյ մը օրոշման տեղի ունենալը կամ մանաւանդ չունենալը յայտնելը:

Ժողովը ժամավաճառ չ'ընելու համար նախավճիռ կ'առաջարկուի, զորօրինակ կրօնական և քաղաքական խնդրոց մէջ

թեան ներածին չափ խօսած ըլլան: Սակայն եթէ վիճաբանութեան ընթացքին մէջ ժողովականներէն ու մանք վիճաբանութեան աւարտումը պահանջեն, Ատենայետը՝ մնացեալ ատենաբանից անունները յիշեցնելով՝ ժողովին կամքը կը հարցնէ. ժողովը կը պատասխանէ ձեռամբարձով առանց վիճաբանութեան:

Յօդ. 20. — Որոշման մասին՝ քուէի, և միջանկեալ խնդրոց համար, կամ վիճաբանեալ խնդրոյ մը վրայ՝ անդամոց մէկուն կողմէն առաջադրուելու և ուրիշի մը կողմէն յայտնուելու՝ մասնաւոր օրակարգի մը պահանջմունք նախադասութիւն ունին գլխաւոր խնդրոյն վրայ, որոյ վիճաբանութիւնը կրնան ընդհատել. բայց ատենաբանին խօսքը՝ ո՛չ, եթէ խօսած ատեն տեղի ունենան այդ պահանջմունք:

Յօդ. 21. — Եթէ վիճաբանութեան փակման դէմ խօսք ուղղուի՝ մէկ ատենաբանի միայն կը տրուի:

Յօդ. 22. — Բարեփոխութիւնք նախադասութիւն ունին գլխաւոր խնդրոյն վրայ և անկէ առաջ քուէի կը դրուին՝ առաջարկութեանց կարգաւ:

Յօդ. 23. — Օրինական կամ կանոնական ծրարագիրք եւ առաջարկութիւնք յօդուած առ յօդուած

ձեռնհասութեան համար, կանոնադրական սկզբան մը համար, արդէն որոշեալ կէտի մը համար և կամ երբ վիճելի կէտը գլխաւոր խնդրոյ մը հետ այն աստիճան կապակցութիւն մը ունի, որ մէկը չի լուծուիր առանց միւսը յուղելու և այն միւսը՝ գալու է օր մը իւր կարգին ժողովն ղեկավարու. վերջապէս երբ որեւիցէ անտեղութիւն մը կայ խնդիրը վիճաբանութեան մէջ ձգելու մասին, զոր պէտք է այդ վիճակն առաջարկողը բացատրէ, որում խօսքը միշտ կը տրուի և թեր ու դէմ խօսողները լսուելէն յետոյ, խնդիր մը կրնայ առանց քննութենէ անցնելու մերժուիլ կամ ետ ձգուիլ սոսկ նախակարգ վճռով:

քուէի կը դրուին: Ամբողջին վրայ քուէով կ'աւարտի միշտ որոշումը:

Ճշգրտութեամբ մասնաւոր քուէի կը դրուին: Յօդ. 24. — Ժողովն իւր որոշման ենթարկեալ խնդրոց վրայ վճիռ կուտայ ձեռամբարձով կամ ելունխտով(*):

Յօդ. 25. — Ձեռամբարձով որոշումը կը կատարուի՝ թեր ու դէմ կարծեաց կողմէն զատ զատ ձեռք վերցնելով (փորձ ու հակափորձ), զոր Դիւանին անգամները կը համրեն և կը հաստատեն:

Եթէ հաստատեն թէ տարակոյս կայ՝ փորձը կը կրկնուի:

Ո՛չ ոք կրնայ խօսք առնուել քուէարկութեան միջոցին:

Յօդ. 26. — Ժողովին մէջ ընտրութիւնք գաղտնի քուէով կ'ըլլան և քուէհամարը չորս քննիչներու ձեռք կը կատարուի, որոնք վիճակով կը հանուին(**):

Գաղտնի քուէարկութիւնը հետեւեալ կերպով կ'ըլլայ: Փոխ-Ատենադպիրն իւրաքանչիւր անգամի կը բաժնէ քուէթուղթ մը, որոյ վրայ անգամք կը գրեն քուէին կանխաւ սահմանուած (5 վայրկեան) պայմանաժամով մէջ. Ատենադպիրը մի առ մի կը հրաւիրէ իւրաքանչիւր ժողովական, որ Դիւանին վրայ եղող

(*) Ելունխտ թէ ձեռամբարձ անխտիր կրնայ գործածել Ատենապետը, բայց ընդհանրապէս ձեռամբարձի առաջին տարակուսելի փորձէն յետոյ՝ ուր ձեռքերը համրելու դժուարութիւն ծագած է, երկրորդ փորձը ելունխտով ընել աւելի որոշիչ համարուած է:

(**) Իւրաքանչիւր ժողովականի անունը՝ առանձինն փոքրիկ թղթի մը վրայ տպուած և տփի մը մէջ դրուած է, որմէ Ատենապետը չորս թուղթ քաշելով՝ նշանակեալ անձինքը կը կոչէ:

քուէտփին մէջ իրեն քուէն ձգէ իւր ձեռքը: Քուէարկութիւնն աւարտելէն ետքը՝ Ատենապետին հրաւիրմամբ Ատենադպիրք քննչաց հսկողութեան ներքեւ քուէհամարը կը կատարեն և Ատենապետն արդիւնքը կ'իմացնէ ժողովին:

Միշտն է քուէն, երբ մէկ քուէով մէկ անձն կ'ուզուի ընտրել եւ քուէթուղթը մէկ անուն պարունակելու է:

Բազմաան է քուէն, երբ մէկ քուէով մէկէն աւելի անձինք կ'ուզուի ընտրել եւ քուէթուղթն ա'յնքան անուն պարունակելու է, ո'րքան անձինք որ կ'ուզուի ընտրել:

Բազմանուն քուէթուղթք՝ եթէ ուզուած որքանութենէն աւելի անուն պարունակեն՝ ընդունելի են. բայց միայն առաջիններէն ուզուած որքանութիւնը կ'առնուի և վերջի աւելորդը չի համրուիր:

Քուէից հաւասարութիւն պատահած ատեն՝ վիճակ կը ձգուի:

Յօդ. 27. — Քուէի մասնակցողաց բացարձակ առաւելութեամբը կը գոյանայ ժողովին որոշումը, երբ քաղաքի առաւելութիւն կը փնտռուի:

Նախագահ Սրբազանը քուէի մասնակցելու պարտաւորեալ չէ և անուանական կոչում չըլլար իրեն համար:

Ամէն քուէարկութեանց վերջը՝ փակեալ յայտարարելէն առաջ՝ Ատենապետը ժողովին կողմէ կը հարցնէ Ս. Պատրիարքին թէ՝ քուէ ունի: Իսկ եթէ քուէհամար ըլլալով թեր ու դէմ քուէից որքանութիւններն իրարու հաւասար ըլլան, եթէ Ս. Պատրիարքը քուէ տուած է, այն քուէին կողմը կը հակի որոշումը զօր Ս. Պատրիարքը պէտք է յայտարարէ. բայց ասիկա

շարժանք տեւողովէն մէջ չի կրնար ըլլալ. անոր մէջ որոշումն որոշողը վէճակ է և ո'չ այլ ոք: Եթէ չէ տրւած, այն ատեն Ատենապետը յանուն ժողովին կը խնդրէ Նորին Սրբազնութեան քուէն, որ կ'որոշէ զորոշումը. բայց եթէ Ս. Պատրիարքը չուզէ դարձեալ մասնակցել քուէարկութեան, խնդիրը կրկին քուէարկութեան կ'ենթարկուի:

Ս. Պատրիարքին բացակայութեանն ատեն՝ Ատենապետին կը մնայ այս իրաւունքը:

Յօդ. 28. — Ժողովին որոշմանց վաւերականութեանը համար՝ անդամոց մեծամասնութեան ներկայութիւնը հարկաւոր է:

Երկու աստիճան մեծամասնութիւն կ'ընդունուի. Օրինակ և Իսկան:

Օրինական մեծամասնութիւնն է՝ Միաբանական Ընդհ. Ժողովոյ քուէ անդամոց որքանութեան կէսէն մէկ աւելին:

Իսկական մեծամասնութիւնն է՝ Ս. Երազմէի քուէ անդամոց որքանութեան կէսէն մէկ աւելին:

Այս երկու աստիճան մեծամասնութիւնք իրենց որոշող մասը կամ ձայնն ունին, որ իւրաքանչիւրին համար իւր բացարձակ առաւելութիւնն է: Զորօրինակ 27ին որոշող ձայնն է 14, և 18ին՝ 10:

Անդամոց ներկայութիւնը Դիւանը կը հաստատէ ներկայութեան տոմարէն և քուէարկութեան ատեն դարձեալ կ'ստուգէ թէ՝ ստորագրողք իսկապէս ներկա են և թէ՝ նիստը լիովին բաւական է որոշման ձեռնարկելու: Եթէ նիստը լիովին բաւական չի գտնուի, կը վերնայ, յաջորդ օրը գումարելու պայմանաւ:

Յօդ. 29. — Օրինական մեծամասնութեան ներկայութիւն կը փնտռուի:

1. Պատրիարքական ընտրելեաց համար:

2. Լուսարարապետի ընտրութեան համար:

Յօդ. 30. — Իսկական մեծամասնութեան ներկայութիւն կը փնտռուի ամէն ընտրութեանց համար, բացի Պատրիարքական ընտրելեաց և Լուսարարապետի ընտրութիւններէն, և այն ամէն խնդրոց համար, որք վիճաբանութեամբք լուծելի են. ի բաց առեալ են ատեանին սկիզբն ըլլալու ատենադրութեան ընդունելութիւնը և այն խնդիրներն ու կէտերը, որք ձեռամբարձով առանց վիճաբանութեան որոշելի են, ինչպէս են հրաժարմանց ընդունելութիւն, առաջնութիւն կամ նախագասութիւն, յղում, օրաձգում, վիճաբանութեան փակում և ստիպողութեան նկատուում, կամ վերջապէս ի մի բան այն խնդիրները, որք սոսկ ատենական գործողութիւնք են, կրնան որոշուիլ ի ներկայութեան որ և է թուոյ անդամոց:

Գ Լ ՈՒՒ Դ.

ԽՆԴՐՈՑ ԿԱՐԳ, ՕՐԱԿԱՐԳ ԵՒ ՍՏԻՊՈՂՈՒԹԻՒՆ

Յօդ. 31. — Ընդհ. Ժողովոյ բացումէն սկսեալ՝ վիճաբանելի խնդրոց կարգը բնականապէս կ'ուզայ և իրեն յատկացեալ տոմարին մէջ կը նշանակուի:

Դիւանին կազմութիւնը, եթէ վերանորոգումը նոյն տարին հանդիպի, Ժողովոյ առաջին նստին աշխատանքն է (Տ. Յօդ. 1):

Ասկէ յետոյ կուգան նախագահական ճառով յատկապէս յանձնարարեալ խնդիրները, որք ՏՆ. Խորհրդոյ կողմէն իբրեւ օրինաց ծրագիր կամ առաջարկութիւն կը ներկայացուին և զորս Ատենապետը՝ առաջնութեան կարգով խնդրոց տոմարին մէջ անցնելու արտօնութիւն կուտայ Ատենագարին՝ Ժողովոյ հաւանութեամբ:

Ո՛չ ոք կրնայ խնդրոց տոմարին մէջ խնդիր աւելցընել կամ պակսեցնել առանց Ժողովոյ հաւանութեան:

Ատենապետը խնդրոց տոմարին հետեւելով կը կարգադրէ յաջորդ նստին օրակարգը (Տ. Յօդ. 17), որ մէկ նստի մէջ վիճաբանելի կամ կարգը նոյն աւուր եկած խնդիր ըսել է, որ և կը կոչուի պարզ և անխառն օրակարգ:

Յօդ. 32. — Բնաւ խնդիր մը չի կրնար պարզ օրակարգին մէջ խառնուիլ, եթէ Ժողովը ստիպողութիւնը նկատողութեան չառնու և չ'ընդունի:

Ոչ մէկ օրակարգ կրնայ առաջարկուիլ՝ եթէ պատճառաբանեալ, խմբագրեալ և Դիւանին աւանդեալ չ'ըլլայ, զոր Ատենապետը Ժողովոյ կը կարգայ:

Պարզ և անխառն օրակարգը, եթէ պահանջուի, առաջնութիւն ունի միշտ:

Յօդ. 33. — Եթէ պարզ ու անխառն օրակարգն ի բաց առնուի, Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վիճաբանութեան թէ՛ կ'ուզէ նկատողութեան առնել կամ մասնաժողովոյ մը յանձնել պատճառաբանեալ օրակարգին քննութիւնը:

Յօդ. 34. — Օրինական խնդրոց կամ առաջարկութեան մը ներկայացման ատեն՝ ստիպողութիւն կրնայ խնդրուիլ:

կրնայ խնդրուիլ Տն. Խորհրդոյ կողմէն, հեղինակին կողմէն, որ և է ժողովականի կողմէն:

Յօդ. 35. — Ստիպողութիւն յայտարարել տալու խնդրանքը պատճառաբանեալ պէտք է ըլլայ:

Ժողովը առանց վիճաբանութեան կ'որոշէ՝ Ատենապետին հարցման վրայ թէ՛ տեղի կա՞յ ելք տալ ստիպողութեան խնդրանքին:

Յօդ. 36. — Եթէ ստիպողութիւն յայտարարուի, ժողովոյ հարցուելէն յետոյ՝ նախաքննութեան համար մասնաժողովոյ մը կը յանձնուի և ըստ այնմ վիճաբանութեան օրը կ'որոշուի:

Մասնաժողովոյ տեղեկագրոյն վրայ ժողովը անմիջապէս վիճաբանութիւնը կը բանայ:

Գ Լ ՈՒՒ Ե.

Ա Ռ Ա Զ Ա Ր Կ ՈՒԹ Ի Ի Ն Ք

Յօդ. 37. — Ժողովականի մը ըրած ո՛րեւէ առաջարկութիւն՝ օրինական թէ պարզ՝ գրաւոր պէտք է ըլլայ: Ստորագրեալ Դիւանին կ'աւանդուի, որ ատենական զործողութեանց կարգը զայն կը հաղորդէ Ժողովոյ, որ եթէ հարկ տեսնէ, նախաքննութեան կը յղէ մասնախմբի մը, զոր ժողովը կ'որոշէ Ատենապետին առաջարկութեան վրայ կամ վիճակաւ:

Յօդ. 38. — Եթէ նախաքննիչ մասնախմբի տեղեկագրոյն եզրակացութիւնը պարզապէս մերժում, կամ օրաձեւում ըլլայ, ժողովը կ'անցնի իւր օրակար-

գին. իսկ եթէ նկատառում ըլլայ, նախ զայն կ'որոշէ ժողովը: Եթէ ընդունի, կ'անցնէ զայն խնդրոց տօմարին մէջ, ուր կը սպասէ իւր օրակարգին:

Յօդ. 39. — Առաջարկութեան մը հեղինակը՝ եթէ վիճաբանութիւնն անգամ բացուած ըլլայ, կրնայ զայն միշտ ետ առնել: Բայց եթէ ուրիշ ժողովական մը զայն բռնէ, վիճաբանութիւնը կը շարունակուի:

Յօդ. 40. — Ժողովէն մերժեալ առաջարկութիւնը չեն կրնար մէկ մ'ալ ներկայանալ երեք ամսէ առաջ:

Յօդ. 41. — Տն. Խորհրդոյ կողմէն ներկայուած օրինական ծրագիր կամ առաջարկութիւն՝ անդամոց մէկուն ձեռօք Բնդհ. Ժողովոյ Դիւանին կ'աւանդուի: Այս ծրագիրը պատճառաբանեալ կ'ըլլան:

Օրինական ծրագիրը կամ առաջարկութիւնը, եթէ ժողովը հարկ տեսնէ, մասնաժողովոյ մը կը յանձնուին՝ խնդիրն ուսումնասիրելու և նախապատրաստական քննութիւն ընելու համար:

Այս մասնաժողովոյն տեղեկագիրը Բնդհ. Ժողովոյ Դիւանին կ'աւանդուի:

Ատենապետը կ'առաջարկէ և ժողովը կ'որոշէ վիճաբանութեան օրը:

Յօդ. 42. — Ո՛չ մի օրինական ծրագիր վերջնական քուէի չի գրուիր, եթէ երեք օրոշումէ չանցնի: Առաջին օրոշումը յատկապէս ծրագրին ընդունելութեանը վրայ կ'ըլլայ: Ժողովոյ կը հարցուի թէ կ'ուզէ՞ երկրորդ օրոշման անցնիլ:

Երկրորդ օրոշումը կ'ըլլայ մէն մի յօդուած վիճաբանութեան և քուէի գնելով, նաև անոնց վերաբերեալ բարեփոխութիւնները, եթէ կան: Ժողովը կ'որոշէ թէ՛ կ'ուզէ երրորդ օրոշման անցնիլ:

Երրորդ օրոշումէն յետոյ, որ ծրագրին բովան-

39972-67
39972-67

դակութեանը և մասնաւոր տրամագրութեանց վրայ վիճաբանութեամբ կ'ըլլայ, վերջնական քուէի կը ձեռնարկուի, որ կը կնքէ որոշումը:

Յօդ. 43. — Բարեփոխութիւնք խմբագրեալ՝ Ատենապետին կը տրուին: Քուէի չենթարկուի ո'չ մէկ բարեփոխութիւն եթէ՝ բացատրուէն յետոյ՝ երկրորդող մը չունենայ:

Յօդ. 44. — Երկրորդ որոշման միջոցին առաջարկեալ բարեփոխութիւնք՝ մասնաժողովոյ յղել իրաւունք է՝ եթէ տեղեկաբերը խնդրէ:

Երկրորդ որոշման փակումէն յետոյ ներկայեալ նոր բարեփոխութիւն կամ յաւելուածական յօդուած՝ երկրորդ որոշման բացումէն առաջ հաղորդուած պէտք է ըլլայ մասնաժողովոյ:

Յօդ. 45. — Եռեակ քուէարկութեամբ բարդ որոշման տնօրէնութիւնը՝ ելմտացուցի խնդրոց համար է. ասոնք միակ քուէարկութեամբ և պարզ որոշման եղանակաւ կը տնօրինուին, այլ կանոնադրական կէտերու համար է:

Յօդ. 46. — Եթէ երեք որոշմանց մէկուն մէջ մերժուի օրինական ծրագիր մը, վեց ամսէ առաջ չի կրնար դարձեալ երեւիլ ժողովոյն օրակարգին մէջ:

Յօդ. 47. — Ժողովոյ որոշմանց արդիւնքը Ատենապետը կը հաշակէ սա բառերով,

«Ընդհ. ժողովն ընդունեց»

կամ «Ընդհ. ժողովը չ'ընդունեց»:

Յօդ. 48. — Ընդհ. ժողովոյ վերջնական վճիռը նոյն ժամէն գործադրելի է:

Ատենապետը՝ ժողովոյ կամքն առնելէն յետոյ՝ յանուն ժողովոյ ստորագրելով կը հրամանէ վճռագրիւրը, նստին օրէն թուականեալ:

Վճռագրին Ատենապետին ձեռք Ամեն. Ս. Պատրիարքին կը տրուի, զոր ինքն ալ ստորագրելով՝ Նախագահական հրամանամբ գործադրութիւնը կ'ապահովէ (Տ. Յօդ. 11):

Օրինակը Պատրիարքարանի Դիւանին մէջ արձանագրուելով՝ վճռագիրը կը պահուի Պատրիարքական Դիւանատան Գրագարանին մէջ:

Յօդ. 49. — Եթէ հաստատուած օրինաց մէջ կանոնադրական յայտարարութիւններ կան, որ Ազգային Ժողովոյ վաւերացմանը կը կարօտին, Ամեն. Ս. Պատրիարքը կը փութայ զանոնք ղրկել ի Պոլիս ի վաւերացումն, և եթէ ստիպողաբար գործադրութիւնը կարեւոր դատուի ժողովով, ժողովն իւր պատասխանատուութեան ներքե կը հրամայէ նաև զայն:

Յօդ. 50. — Ժողովն իւր որոշումէն ետ չի կըրնար դառնալ կամ զայն փոխել, եթէ Միաբանական Վարչութեան կողմէն՝ «Երեւելի խնդրոց» գործադրութեան անտեղութիւն պատճառելով՝ ստիպողաբար փոփոխութիւն չի խնդրուի, որոշումէն զոնէ երեք կամ վեց ամիս յետոյ:

Եթէ ստիպողութիւնը մերժուի, արդէն որոշեալ խնդիրը մէկ մ'ալ չի կրնար ներկայուիլ նոյն ատենական շրջանին մէջ:

Գ Լ ՈՒ Խ Զ.

ԲԵՄԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

Յօդ. 51. — Ժողովոյ ուղղակի և ներքին յարաբերութիւնները Միաբանական Վարչութեան հետ են, որոյ անդամք իրենց համարատուութեան խնդրոյն մէջ ձայն ունին, բայց քուէ ո'չ:

Ընդհ. Ժողովոյ Դիւանն առանց թղթի գործ ո'չ կ'ընդունի իւր Վարչութեան և ո'չ կը յղէ իւր Վարչութեան (*):

Յօդ. 52. — Տն. Խորհուրդը պատասխանատու է առ Ընդհ. Ժողով՝ անձնիւր անդամ առանց իւր պաշտօնին և բոլոր անդամք հասագողէ խորհրդոյ գործառնութեանց նկատմամբ՝ ըստ Կանոնի Միաբանական Ուխտին:

Այս պատասխանատուութիւնը կը կատարուի Ընդհ. Ժողովոյ մէջ կանոնաւորապէս տեղի ունեցած հարցմանց պատասխանելով և տարեկան համարատուութեամբ Խորհրդոյ. որով Ընդհ. Ժողովոյ կը ներկայացնէ տեւական և ընդհանուր վերակերպութիւնները,

(*) Տն. Խորհուրդը չի կրնար և իրաւունք չունի խնդիր յղել Ժողովին ի քննութիւն և տարտամ կերպով կարծիք հարցնել. քանզի քննութիւնը տեղեկագիր կը պահանջէ և Ժողովը տեղեկութիւն տալու տեղ չունի և իրմէ վեր պաշտօնական մարմին չկայ բացի Ազգ. Ժողովէն: Իւր քննութեանց և վիճաբանութեանց նպատակը՝ միայն վճռի մը հասնիլ է: Իրեն եկած թուղթերը, որ իւր Դիւանին կ'աւանդուին, վճիռ կ'սպասեն և ո'չ տեղեկագիր:

Տն. Խորհրդոյ ընելիքը խնդրանք մի է կամ առաջարկութիւն, որոյ համար ստիպողութիւն կրնայ խնդրել:

եղծմանց և անկանոնութեանց առաջն առնելու համար նոր հաստատուած օրէնքն ու կանոնները, Միաբանական գործոց իւրաքանչիւր ճիւղին իւր մասին մէջ ո'րչափ յառաջադիմած և ո'ր աստիճան բարգաւաճեալ ըլլալը. վերջապէս որ և է պաշտօնէի պատականութիւնը կատարած կամ ո'ր աստիճան կատարել կրցածը:

Եթէ այդ համարատուութիւնքը և Միաբանութեան տարեկան ելմտացոյցը ժամանակին Ընդհ. Ժողովոյ Դիւանին չ'աւանդուին, պատասխանատու կը մնայ Միաբանական Վարչութիւնը, որոյ այս մասին հարցում կ'ուղղուի Ընդհ. Ժողովոյ Դիւանէն:

Յօդ. 53. — Վարչական պաշտօնէից տարեկան համարատուութիւնը՝ ըստ Կանոնի՝ տարւոյն վերջերը Ընդհ. Ժողովոյ Դիւանին կ'աւանդուի: Ժողովը, եթէ հարկ տեսնէ, զայն նախաքննիչ մասնաժողովոյ մը կը յաճնէ, որ իւր քննութեանց արդիւնքը տեղեկագրով մը Ժողովոյ կը մատուցանէ տեղեկաբերի մը միջոցաւ:

Ատենապետը կ'առաջարկէ և Ժողովը կ'որոշէ վիճաբանութեան օրը:

Յօդ. 54. — Համարատուութեան քննութեան արդեամբ Ժողովը կամ կը գովէ կամ կը պարսաւէ Տն. Խորհրդոյ ընթացքը և իւր դատավճիռը գաղտնի քուէով կը յայտնէ (*):

Համարատուութեանց չ'ընդունելութիւնն անվրստահութիւն կ'ենթադրէ Ժողովոյ կողմէն համարատու անձին վրայ, որ պարտաւորեալ կը գտնուի հրաժարելու:

(*) Այս քուէարկութիւնը՝ ընտրութեանց համար եղածին նման կ'ըլլայ, միայն թէ՝ քուէթղթոց վրայ փոխանակ անուն գրելու, պէտք է այլ՝ կամ ա'լ գրել, որ ընդունելութիւն կամ չ'ընդունելութիւն կը նշանակէ:

Յօդ. 55. — Տնօրէն Խորհրդոյ անդամոց հրաժարականը Ս. Պատրիարքին կը տրուի, որ անմիջապէս ժողովոյ կը հաղորդէ: Սոյն հրաժարականը ժողովը, եթէ հարկ տեսնէ, մասնաժողովոյ մը կը յանձնէ և նորա եզրակացութեանը վրայ ձեռամբարձով առանց վիճաբանութեան՝ կա՛մ կ'ընդունի կա՛մ կը մերժէ:

Յօդ. 56. — Որեւէ պարագայի մէջ՝ երբ Տն. Խորհրդոյ անդամներէն որեւիցէ մէկը ժողովոյ կողմէն անվստահութեան ցոյց կամ կասկած նշմարէ, միշտ իրաւունք ունի վստահութեան քուէ պահանջելու:

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վիճաբանութեան թէ՛ այդ քուէին հարկ կա՞յ: Այդ քուէն յաջորդ նստին կը մնայ, որոյ արդիւնքը Տն. Խորհրդոյ միւս անդամոց չի դաշխի:

Յօդ. 57. — Ժողովական մը ամէն ատեն կրնայ հարցում կամ հարցապնդում(*) ուղղել Տն. Խորհրդոյ որեւէ մէկ անդամին, կամ Ս. Պատրիարքին, բայց գրաւոր պէտք է տայ իւր այդ խնդրանքն Ատենապետին: Այդ խնդրանքը կը բացատրէ համառօտիւ հարց-

(*) Հարցումը՝ խնդրոյ մը վիճակն ստուգելու համար կ'ըլլայ, և Պատրիարքը տրուելով կը վերջանայ. վիճաբանութեան և քուէարկութեան հարկ չկայ, միջադէպ մըն է, որ կը գոցուի: Իսկ Հարցապնդումը՝ խնդրոյ մը առթիւ պաշտօնէութիւնը քննադատել կ'ենթադրէ, և պատասխանը տեսակ մը բացատրութիւն է, որ կը տրուի վերբերական պաշտօնէին կողմէն՝ անոր վրայ վիճաբանութիւն կ'ըլլայ և պատճառաբանեալ օրակարգի, կամ պարզ և անխառն օրակարգի կամ ուրիշ մէկ առաջարկութեան կամ վստահութեան կամ անվստահութեան քուէարկութեամբ կը վերջանայ: Ասիկա տեսակ մը համարատուութիւն է, որ մասամբ կը կատարուի յենթացո տարւոյ, և դատաստան մը, ուր պաշտօնեայն կը դատապարտուի կամ ի չքմեղս կ'ելնէ:

ման նիւթը և կ'ըսէ ո՛ւմ ուղղեալ ըլլալը, Ատենապետը կ'ընթեռնու զայն ժողովոյ:

Ժողովականէ առ ժողովական հարցում կամ հարցապնդում արգելեալ է:

Յօդ. 58. — Տն. Խորհրդոյ անդամներէն այն, որում անկ է պատասխանել, հարցման կամ հարցապնդման պատասխանելն հնարաւոր կամ ո՛չ ըլլալուն և ե՞րբ կարենալուն վրայ իւր կարծիքը տալէն յետոյ, ժողովը կը վճռէ ձեռամբարձով՝ առանց վիճաբանութեան՝ թէ ե՞րբ կ'ուզէ լսել այդ հարցումը կամ հարցապնդումը:

Հարցումը կամ հարցապնդումը լմնալէն և միջադէպը գոցուելէն յետոյ, ժողովը կը դառնայ իւր օրակարգին:

Յօդ. 59. — Ս. Պատրիարքին համար անվստահութեան քուէ չ'առաջարկուիր, և ո՛չ իսկ ինք կըրնայ վստահութեան քուէ պահանջել. բայց կրնայ ամբաստանուիլ ժողովականաց կողմէն Կանոնադրութեան հակառակ ընթացքի մը համար, կամ անոր գործադրութեան անհոգութեանը համար:

Երբ Կանոնաւոր (Տ. Յօդ. 32) ամբաստանագիր մը աւանդուի Ընդհ. Ժողովոյ Դիւանին, Ատենապետը զայն կը յայտնէ ժողովոյ և անոր կարծիքն առանց վիճաբանութեան առնելէն յետոյ՝ նախաքննիչ մասնաժողովոյ մը կը յանձնէ, որոյ անդամները գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրուին՝ ամբաստանող խմբէն դուրս գտնուող անդամներէն:

Այս մասնաժողովն իւր տեղեկագրով կա՛մ պարզապէս մերժման կ'եզրակայէ կա՛մ նկատառման:

Տեղեկագրին եզրակայութեան վրայ ժողովը կ'արտասանէ իւր վճիռը ձեռամբարձով՝ առանց վիճաբա-

նութեան, և ըստ այնմ կ'ամ կ'անցնի իւր օրակարգին՝ եթէ մերժումն արտասանէ, կ'ամ ելք կուտայ ամբաստանութեան՝ եթէ նկատառում արտասանէ:

Այս վերջին պարագային մէջ՝ քննիչ մասնաժողով մը կ'ընտրուի զարձեւել ըստ վերնոյն՝ գաղտնի քուէով և ամբաստանողներէն դուրս գտնուող անդամներէն՝ ամբաստանութիւնը քննելու համար:

Այս քննիչ մասնաժողովոյն տեղեկագիրը գալէն ետքը կը կարգացուի և դատական նստի օրը կը սահմանուի, և սոյն նիստը ըստ Կանոնի Պատրիարքական Փոխանորդը կը գումարէ (Տ. Յօդ. 6): Սոյն նստին մէջ վիճաբանութիւն և քուէարկութիւն կ'ըլլայ և տեղեկագիր մը կը պատրաստուի Կ. Պոլիս զրկելու համար:

Իսկ եթէ ամբաստանութիւնն անիրաւի դատուի ժողովէն, այս որոշումը յանուն ժողովոյ՝ Դիւանը կը հաղորդէ Ս. Պատրիարքին և յաջորդ նստին ամբաստանողք կը պարտաւորին ներում խնդրել նորին Սրբապետութենէն, կամ պատիժ կրել ըստ որոշման ժողովոյն:

Յօդ. 60. — Սոյն օրինակ կրնայ ամբաստանուիլ նաև Տն. Խորհրդոյ իւրաքանչիւր ճիւղ և Ընդհ. Ժողովը սոյն ճամբով կը դիմէ իւր գատավճռոյն, միայն թէ՛ այս պարագային մէջ զանց կ'առնուի նախաքըննիչ մասնաժողովը:

Եթէ Տն. Խորհրդոյ ո՛րեւէ մէկ ճիւղին դէմ եղած ամբաստանութիւնն իրաւացի դատուի ժողովէն, պարտաւոր ճիւղն պաշտօնանկ կ'ըլլայ. իսկ ընդհանրապէս՝ եթէ ամբաստանութիւնն անիրաւի դատուի ժողովէն, անպարտ ճիւղին հաստատութիւնն կ'ամրապնդի, եւ ամբաստանողք կը պարտաւորին յաջորդ նստին ներումն խնդրել անպարտ ճիւղէն կամ պատիժ՝ կրել ըստ որոշման ժողովոյն:

Յօդ. 61. — Տն. Խորհրդոյ անդամք ալ կրնան ամբաստանել Ս. Պատրիարքը, բայց պէտք է նախ հրաժարին կամ դադրին պաշտօնէ. սակայն չեն կրնար ամբաստանել, երբ արդէն նորին Սրբապետութեանը կողմէն խորհրդականաց փոփոխման մը առաջարկութիւն աւանդուած է Ընդհ. Ժողովոյ Դիւանին:

Յօդ. 62. — Եթէ Ս. Պատրիարքը Տն. Խորհրդոյ մասնակի կամ ամբողջակի փոփոխումն առաջարկէ Ընդհ. Ժողովոյ, պատճառաբանեալ կ'ընէ այդ առաջարկութիւնը և ժողովը մասնաժողովոյ մը նախաքըննութեան կը յանձնէ և անոր տեղեկագրոյն եզրակացութեանը վրայ հարկ եղած տնօրէնութիւնը կ'ընէ:

Գ Լ ՈՒՒ Է.

ՊԱՏԺԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 63. — Ընդհ. Ժողովոյ կանոնադանց անդամոց տնօրինուելու բարեկարգական պատիժներն երեք աստիճան՝ և ասոնք են.

- Մեղմ { 1. Ի կարգ կոչում:
Խիստ { 2. Յանդիմանութիւն.
 { 3. Պարսաւանօք յանդիմանութիւն:

Մեղմ պատիժն Ատենապետը կը տնօրինէ. խիստ պատիժները ժողովը կ'արտասանէ:

Յօդ. 64. — Ի կարգ կը կոչուի այն ատենաբանը, որ կարգէն կը խոտորի, այն անդամն, որ 15^{րդ} յօդուածին պատուիրանքը չի յարգելով կամ որեւիցէ կերպով՝ բարեկարգութիւնը կը խանգարէ:

Յօդ. 65. — Ատենապետն ինքնին անկախ հեղի-
նակութիւն ունի ի կարգ կոչելու:

Այս քը կը շնորհուի այն ատենաբանին, որ ի կարգ
կոչուելով կը հպատակի Ատենապետին հեղինակու-
թեանը և կը խնդրէ զինքն արդարացնել:

Այն անդամն, որ խօսելու արտօնութիւնն է՝ առած
զինքն ի կարգ կոչել կուտայ, խօսք է՝ ունի զինքն ար-
դարացնելու համար եթէ Ատենապետը չի հաճի, այլ
միայն ատենանին վերջերը:

Յօդ. 66. — Երբ ատենաբան մը միւսնոյն նստին
մէջ երկու անգամ ի կարգ կոչուի, Ժողովը Ատենա-
պետին առաջարկութեանը վրայ կրնայ արգելել զայն
այնուհետեւ խօսքէ նոյն նստին մէջ:

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վիճաբա-
նութեան:

Յօդ. 67. — Յանդիմանութիւն կ'արտասանուի այն
անդամին դէմ,

1. Որ մէկ քանի անգամ ի կարգ կոչուելէն ետքը
չի դառնար ի կարգ և ի պարտականութիւն:

2. Որ Ժողովոյ մէջ աղմկայոյց տեսարան մը յա-
րուցանելու նախաձեռնէ կամ օրէնսդրական աշխա-
տանքէ հաւաքապէս ձեռնպահութիւն թելադրէ:

3. Որ իւր պաշտօնակցաց մէկուն կամ մէկ մա-
սին դէմ նախատինք կամ գրգռիչ սպառնալիք ուղղէ:

Յօդ. 68. — Պարսաւանօք յանդիմանութիւն կ'ար-
տասանուի այն անդամին դէմ,

1. Որ պարզ յանդիմանութեան դիմադարձութիւն
ընէ:

2. Որ Ժողովը անարգէ, կամ անոր մէկ մասը,
կամ Ատենապետը:

Յօդ. 69. — Պարսաւանօք յանդիմանութիւնը կը
պարտաւորէ յանցաւոր անդամն՝ իսկոյն ատենանը թո-
ղուլ դուրս ելնել և այլ ևս չ'երևիլ նոյն նստին մէջ:

եթէ չ'եղնէ, նախագահը հրաման կ'ընէ:

Յօդ. 70. — Յանդիմանութիւնները թէ՛ պարզ թէ՛
պարսաւանօք Ժողովը կ'արտասանէ ձեռամբարձով ա-
ռանց վիճաբանութեան, Ատենապետին՝ յանուն կա-
նոնադրութեան՝ առաջարկութեանը վրայ և նախա-
գահը կը գործադրէ:

Այն Ժողովականը, որոյ դէմ առաջարկուի այս բա-
րեկարգական պատիժներէն մէկը կամ միւսը, միշտ ի-
րաւունք ունի իւր արդարացման համար խօսելու կամ
յանուն իւր խօսեցնելու իւր պաշտօնակցաց մէջ:

Ժողովոյ արտասանած պատիժներն ատենագրու-
թեանց մէջ կը նշանակուին:

Գ Լ ՈՒՒ Ը.

Բ Ա Յ Ա Կ Ա Յ ՈՒ Թ Ի Ի Ն Ք

Յօդ. 71. — Բացակայութեան հզօր եւ բանաւոր
պատճառներն են.

1. Հիւանդութիւն.

2. Տեսչութեամբ և ամսական պաշտօնավարու-
թեամբ ի Ս. Յարութիւն գտնուիլ(*):

Յօդ. 72. — Ս. նախագահին ներկայութիւնը միշտ

(*) Ստիպողական գործով բացակայ գտնուող Ժողովա-
կան մը պարտի կանխաւ գրով հաղորդել իւր բացակայութեան
պատճառը. իսկ եթէ պաշտօնական յեղակարձ գործով մը բա-
ցակայ գտնուի, պարտի յաջորդ նստին գրաւոր բացատրու-
թիւն տալ իւր բացակայութեան նկատմամբ: Այս տեսակ բա-
ցակայութեանց ընդունելութիւնը կամ մերժումը՝ առանց վի-
ճաբանութեան ձեռամբարձով կ'ըլլայ:

կարեւոր է ժողովոյ շուքն ու պատկառանքն աւելցընելու համար և երբեմն անհրաժեշտ՝ ժողովոյ ներքին ապահովութեանը համար:

Երբ բանաւոր պատճառով ստիպուել բացակայութեան, իւր տեղ Փոխանորդը կը նախագահէ:

Յօդ. 73. — Ընդհ. ժողովոյ Դիւանի անդամոց ներկայութիւնը միշտ հարկաւոր է ատեանին բացման ճիշդ օրոշեալ ժամուն, մանաւանդ Ատենապետին ու Ատենադպրին անհրաժեշտ է, մէկը՝ ատեանը բանաւոր, միւսը՝ ատենադրութեան վրայ դիտողութեանց պատասխանելու համար:

Եթէ Ատենապետը հզօր պատճառով մը ստիպուել բացակայութեան, պարտաւոր է կանխաւ իմաց տալ Փոխ-Ատենապետին:

Նոյնը կը պարտաւորի ընել նաեւ Ատենադպրը՝ Փոխ-Ատենադպրին:

Ժողովոյն արժանապատուութեան դպչող անտեղութիւն է Ընդհ. ժողովոյ Դիւանի անդամոց բացակայութեան պատճառաւ՝ առօրեայ Դիւանով ատեան բանաւոր հարկադրուիլ (Տ. Յօդ. 2):

Յօդ. 74. — Եթէ ժողովական մը առանց բանաւոր պատճառի ատենական շրջանի մը մէջ երկու անգամ բացակայ ըլլալէն յետոյ, երրորդ անգամ մ'ալ բացակայ գտնուել, իւր Միաբանական պարտուց դէմ՝ մեղանշած կ'ըլլայ երեք անգամ և ի պատիժ իւր միաբանական տարեկանին մէկ երրորդ մասէն կը զրկուել. եթէ չորրորդ անգամ մ'ալ բացակայ գտնուել, նոյն տարեկանին մէկ երրորդ մասէն ալ կը զրկուել, և եթէ հինգերորդ անգամ մ'ալ բացակայ գտնուել, բոլոր տարեկանէն կը զրկուել. իսկ եթէ վեցերորդ անգամ մ'ալ բացակայ գտնուել, կ'ըլլայ վեցնախա բացակայութիւն,

զոր ժողովը Ատենապետին՝ յանուն Կանոնադրութեան՝ առաջարկութեանը վրայ՝ ձեռամբարձով առանց վիճաբանութեան կը վճռէ, և նոյն պարտաւորանք անդամին պատիժը կ'որոշէ:

Գ Լ ՈՒ Խ Թ.

Տ Ն Օ Ր Է Ն Խ Ո Ր Հ ՈՒ Ր Դ

Յօդ. 75. — Ս. Աթոռոյ Տն. Խորհուրդը Ս. Պատրիարքին նախագահութեամբ հետեւեալներէն կը կազմուի.

1. Լուսարարպետ.
2. Պատրիարքական Փոխանորդ կամ Յարաբերութեանց Տեսուչ.
3. Ելեւմտից Տեսուչ.
4. Ուսումնապետ.
5. Տնտեսապետ.
6. Կալուածապետ:

Ասոնք բաց ի Լուսարարապետէն, որ ցկեանս անփոփոխ է, երկու տարուոյ համար կ'ընտրուին և վերընտրելի են (Տ. Յօդ. 52):

Այս պաշտօնեաները՝ Միաբանական Ուխտին Կանոնը կարգացուելով՝ միանուն քուէով զատ զատ կ'ընտրուին բացարձակ առաւելութեամբ քուէից:

Քուէից հաւասարութիւն պատահած ատեն վիճակ կը ձգուի:

Տն. Խորհուրդն ինքը կ'ընտրէ իւր Դիւանը եւ Ընդհ. ժողովոյ կը հաղորդէ:

Գ Լ ՈՒ Խ Ժ.

Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ք

Յօդ. 76. — Ընդհ. Ժողովն ըստ հարկին առժա-
մանակեայ մասնաժողովներ կը կարգէ Յէն մինչև 7
անդամներէ բաղկացեալ, կանոնադրութեան, Տն. Խոր-
հրդոյ համարատուութեան, առաջարկութեան մը և
այլ խնդրոց նախապատրաստական քննութեան հա-
մար, դատաստանի մը համար, և այլն:

Յօդ. 77. — Որեւէ մասնաժողովոյ անդամք քուէից
համեմատական առաւելութեամբ կ'ընտրուին:

Ընդհ. Ժողովոյ Ատենապետը չի կրնար որեւէ
մասնաժողովոյ անդամ ընտրուիլ:

Մասնաժողովոյ անդամ մը՝ ուրիշ մասնաժողովոյ
մ'ալ անդամ կրնայ ըլլալ:

Յօդ. 78. — Իւրաքանչիւր մասնաժողով ինքը կը
կարգէ իւր Ատենապետն ու Ատենադպիրը և յանձնուած
խնդիրը քննելէն յետոյ կ'որոշէ իւր տեղեկաբերը:

Մասնաժողովք տեղեկագրով մը և տեղեկաբերի
մը միջնորդութեամբ կը ներկայեն Ընդհ. Ժողովոյ ի-
րենց աշխատութեան արդիւնքը, որ տեղեկագրոյն
վերջը եղբակացութեամբ կ'ամփոփի:

Մասնաժողովոյ մը պաշտօնը՝ իւր տեղեկագրոյն
հետ կ'աւարտի:

Ամէն տեղեկագիր, որ մասնաժողովոյ անդամոց
ստորագրութիւնքը և գրութեան թուականը չը կրեր,
անվաւեր և իբրեւ չ'եղեալ կը նկատուի Ժողովէն:

Եթէ մասնաժողովոյ անդամ մը համամիտ չ'ըլլայ
իւր ընկերներուն, դարձեալ պէտք է ստորագրէ տե-

ղեկագիրը, իւր ստորագրութեան ներքեւ աւելցնելով և
բացատրելով իւր կարծիքը:

Յօդ. 79. — Երբ մասնաժողով մը առանց բանա-
ւոր պատճառի՝ որոշեալ նստին իւր քննութեան ար-
դիւնքը չը բերէ Ընդհ. Ժողովոյ, անգամ մը ի կանո-
նապահութիւն յորդորուելով եթէ դարձեալ անհոգ մը-
նայ իւր պարտքը կատարելու, պարսաւանաց քուէ
ընդունելով՝ կը լուծուի և տեղը յաջորդ մը կ'ընտրուի:

Մասնաժողովոյ մը գոնէ տեղեկաբերը պէտք է
ներկայ գտնուի նստին:

Յօդ. 80. — Առաջարկութեան մը հեղինակն իրա-
ւունք ունի ընթերակցելու խորհրդակից ձայնով նոյն
առաջարկութիւնը քննող մասնաժողովոյ նստերուն:

Եթէ միեւնոյն առաջարկութեան քանի մը հեղի-
նակներ ըլլան, մէջերնէն մէկն իրենց ներկայացուցիչ
կ'որոշեն:

Յօդ. 81. — Ընդհ. Ժողովոյ և Տն. Խորհրդոյ Դի-
ւանները պարտաւոր են մասնաժողովոց տրամադրու-
թեան ներքեւ դնել անոնց վերաբերեալ թուղթերն ու
տեղեկութիւնները:

Գ Լ ՈՒ Խ ԺԱ.

Վ Ե Ր Ա Ք Ն Ն ՈՒ Թ Ի Ի Ն

Յօդ. 82. — Սոյն կանոնադրութիւնն երկու տա-
րիէն վերաքննելի է:



4138



NL0031316

